ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ԴՐԱՄԱՇՆՈՐՀԻ ՁԵՎՈՎ ՏՐԱՄԱԴՐՎՈՂ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ԳՈՒՄԱՐՆԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՄԱՍԻՆ

N ՄՇԴ-66 - 2024 ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

«01» «02» 2024 թ.

ք. Երևան

Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունը (այսուհետ՝ պետական մարմին), ի դեմս գլխավոր քարտուղար Հասմիկ Հակոբյանի, որը գործում է պետական մարմնի կանոնադրության հիման վրա, մի կողմից, և «Հայաստանի ազգային կինոկենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպությունը (այսուհետ՝ կազմակերպություն), ի դեմս կազմակերպության տնօրենի պաշտոնակատար՝ Շ. Միրզախանյանի, որը գործում է կազմակերպության կանոնադրության հիման վրա, մյուս կողմից (այսուհետ միասին՝ կողմեր), հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2023 թվականի դեկտեմբերի 28-ի N 2323-Ն որոշումը (այսուհետ՝ որոշում), որոշման «1056. Կինեմատոգրաֆիայի ծրագրի» «11003. Ազգային կինոծրագրերի իրականացում» միջոցառման (այսուհետ՝ ծրագիր) իրականացման նպատակով կնքեցին սույն պայմանագիրը (այսուհետ՝ պայմանագիր)՝ հետևյալի մասին.

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1. Սույն պայմանագրով պետական մարմինը պարտավորվում է ծրագրի իրականացման նպատակով կազմակերպությանը հատկացնել սույն պայմանագրով սահմանված վճարը, իսկ կազմակերպությունը պարտավորվում է սույն պայմանագրով սահմանված վճարի դիմաց սույն պայմանագրով սահմանված կարգով ու ժամկետում կատարել սույն պայմանագրի 2.4-րդ կետով և իր կանոնադրությամբ նախատեսված ազգային կինոծրագրերի իրականացում և այլ գործառույթներ (այսուհետ՝ միջոցառումներ)՝ համաձայն սույն պայմանագրի անբաժանելի մաս կազմող՝

1.1.1. ազգային կինոծրագրերի կանխատեսվող ֆինանսական և ոչ ֆինանսական ցուցանիշների՝ Հավելված N 1,

1.1.2. ֆինանսական պարտավորությունների կատարման ժամանակացույցի՝ Հավելված N 2,

1.1.3. կինոարվեստի ոլորտում հիմնական կատարողական ցուցանիշների (ՀԿՑ)՝ Հավելված N 3:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐՆ ՈՒ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1. Պետական մարմինն իրավունք ունի՝

2.1.1. ցանկացած ժամանակ (այդ թվում՝ ՀՀ ֆինանսների նախարարության և պետական այլ մարմինների միջոցով) ստուգելու կազմակերպության կողմից իրականացվող միջոցառումների ընթացքը և որակը՝ առանց միջամտելու վերջինիս

գործունեությանը, ինչպես նաև օրենսդրությամբ սահմանված կարգով իրականացնել ներքին աուդիտ,

2.1.2. կազմակերպությունից պարբերաբար պահանջել ու ստանալ տեղեկատվություն սույն պայմանագրի կատարման ընթացքի մասին,

2.1.3. սույն պայմանագրով սահմանված պահանջներին չհամապատասխանելու դեպքում չընդունելու իրականացված միջոցառումները՝ իր հայեցողությամբ սահմանելով թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետ, և կազմակերպությունից պահանջելու վճարել սույն պայմանագրի 6.4 կետով նախատեսված տուգանքը, իսկ սույն պայմանագրով նախատեսված պների ներկայացման համար սահմանված ժամկետները չպահպանելու դեպքում՝ պայմանագրի 6.5 կետով նախատեսված տույժերը,

2.1.4. առանց իրականացված միջոցառումների արդյունքների դիմաց գումար տրամադրելու՝ միակողմանի լուծելու սույն պայմանագիրը և պահանջելու հատուցել պատճառված վնասները, եթե՝

ա. առանց հիմնավոր պատճառի կազմակերպությունը ժամանակին չի սկսում միջացառման իրականացումը, կամ միջոցառման իրականացման ժամանակ ակնհայտ է դառնում, որ այն պատշաճ չի իրականացվելու,

բ. կազմակերպությունը երկու և ավելի անգամ խախտել է ծրագրով նախատեսված առանձին միջոցառումների իրականացման ժամկետները (սույն պայմանագրով կամ կանոնադրությամբ միջոցառումների իրականացման ժամկետներ նախատեսված լինելու դեպքում),

գ. իրականացված միջոցառումները չեն համապատասխանում ծրագրով սահմանված պահանջներին,

2.1.5. կազմակերպության կողմից սույն պայմանագրի պահանջները չկատարելու դեպքում դադարեցնելու ֆինանսավորումը՝ մինչև թերությունների վերացումը,

2.1.6. կազմակերպության կողմից սույն պայմանագրով նախատեսված միջոցառումների ֆինանսական ծախսեր ենթադրող ոչ ֆինանսական ցուցանիշների թերակատարման դեպքում պահանջելու հետ վերադարձնել համապատասխան չափով հաշվարկած գումարը, կամ նշված գումարի չափով պակասեցնելու հետագա տարիների ֆինանսավորումը, կամ հետագա տարիների պայմանագրերով պարտավորեցնել լրացնելու ոչ ֆինանսական ցուցանիշների թերկատարումը,

2.1.7. սույն պայմանագիրն օրենքով կամ սույն պայմանագրով նախատեսված հիմքերով լուծելու դեպքում պահանջելու իրեն հանձնել անավարտ միջոցառումների արդյունքները,

2.1.8. սույն պայմանագրի 2.4-րդ կետով նախատեսված պարտավորությունները վերանայել (փոփոխություն կատարել) նախորդ տարվա հաշվետվությունների արդյունքների հիման վրա:

2.2. Կազմակերպությունն իրավունք ունի՝

2.2.1. պետական մարմնից պահանջելու ընդունել սույն պայմանագրի 1.1-ին կետում նշված և կազմակերպության կողմից պատշաճ ձևով ու կարգով կատարված միջոցառումները,

2.2.2. պետական մարմնից պահանջելու վերացնել կազմակերպության գործողություններից (անգործությունից) անկախ՝ պետական մարմնի մեղքով սույն

պայմանագրի կատարման համար առաջացած խոչընդոտները կամ վերանայել սույն պայմանագրի պայմանները,

2.2.3. իրականացված միջոցառման արդյունքը պետական մարմնի կողմից ընդունվելու և պետական մարմնի կողմից գումարները չվճարվելու դեպքում միակողմանի լուծելու սույն պայմանագիրը և պահանջելու հատուցել իրեն պատճառված վնասները,

2.2.4. վաղաժամկետ լուծել սույն պայմանագիրը՝ սույն պայմանագրով կամ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով և դեպքերում:

2.3. Պետական մարմինը պարտավոր է՝

2.3.1. Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ և (կամ) ծրագրով նախատեսված դեպքերում իր և կազմակերպության կանոնադրություններով սահմանված իրավասությունների շրջանակներում աջակցել կազմակերպությանը, այդ թվում՝ կազմակերպությանը ցուցաբերել մեթոդական և կազմակերպական օգնություն,

2.3.2. ընդունել սույն պայմանագրի պահանջներին համապատասխան կազմակերպության կողմից պատշաճ ձևով ու կարգով կատարված միջոցառումները և հաշվետվությունները,

2.3.3. կատարել ծրագրի (առանձին միջոցառումների) իրականացման մոնիթորինգ՝ անհրաժեշտության դեպքում համագործակցելով այլ պետական կառավարման մարմինների հետ,

2.3.4. իրականացված միջոցառման մասին ներկայացված ֆինանսական և բովանդակային հաշվետվությունների վերաբերյալ համապատասխան որոշում ընդունել դրանք ստանալու օրվանից մինչև 20 աշխատանքային օրվա ընթացքում: Հաշվետվություններում թերություններ հայտնաբերվելու դեպքում դրանք վերադարձվում են լրամշակման՝ դրա համար սահմանելով խելամիտ ժամկետներ: Եթե իրականացված միջոցառման ներկայացված հաշվետվությունները համապատասխանում են ծրագրի և սույն պայմանագրի պահանջներին, ապա դրանք ընդունվում են,

2.3.5. իրականացնել սույն պայմանագրով նախատեսված այլ միջոցառումներ:

2.4. Կազմակերպությունը պարտավոր է՝

2.4.1. ապահովել կազմակերպության գործունեությունը կազմակերպության կանոնադրական նպատակներին և խնդիրներին համապատասխան,

2.4.2. պայմանագրով նախատեսված ֆինանսական միջոցներն օգտագործել ծրագրով և (կամ) սույն պայմանագրով սահմանված նպատակներով ու չափաքանակներով՝ համաձայն սույն պայմանագրի 1.1 կետի,

2.4.3. կատարել պետական մարմնի կողմից բացահայտված թերությունների վերացման նպատակով տրված ցուցումները,

2.4.4. Ժամանակին, պատշաճ ձևով ու կարգով կատարել սույն պայմանագրի 1.1-ին կետով նախատեսված միջոցառումները՝ աջակցել կինոարվեստի բնագավառում երկրի համար հասարակական, քաղաքական, մշակութային ու գեղարվեստական կարևորություն ունեցող, ազգային գաղափարախոսությունն ու արդիական խնդիրներ արտահայտող խաղարկային, վավերագրական, անիմացիոն լիամետրաժ և կարճամետրաժ կինոնկարների ստեղծմանը՝ նախապատվությունը տալով գաղափարագեղարվեստական բարձրարժեք հայտերին, աջակցել մանուկների և պատանիների նախասիրություններին, հետաքրքրություններին, քաղաքացիական գիտակցությանը, հայրենասիրության

ձևավորմանը նպաստող խաղարկային, վավերագրական և անիմացիոն կինոնկարների ստեղծմանը և ստեղծել կինոտարեգրություն՝ երկրի համար հասարակական-քաղաքական, մշակութային կարևոր իրադարձությունների նկարահանմամբ,

2.4.5. երիտասարդ կինոգործիչների ստեղծագործական ներուժի խթանման նպատակով, աջակցել նրանց մասնագիտական ունակությունների կատարելագործմանը՝ մասնավորապես աջակցելով դեբյուտային կինոնախագծերի իրականացմանը,

2.4.6. մինչև ֆիլմերի հրապարակային ցուցադրումը ապահովել դրանց փակ դիտումը պետական մարմնի ներկայացուցիչների մասնակցությամբ,

2.4.7. ապահովել (առնվազն 6 միջոցառում) ՀՀ մարզերի, մասնավորաբար՝ սահմանամերձ համայնքի բնակիչների, արցախահայության, երկրորդ արցախյան պատերազմից տուժած, հաշմանդամություն ունեցող զինծառայողների, զոհված զինվորների ընտանիքների, քրեակատարողական հիմնարկներում անազատության մեջ պահվող անձանց լիարժեք ընդգրկվածությունը Հայաստանի մշակութային կյանքում, (ինչպես ստեղծագործական պրոցեսի անմիջական մասնակցի, այնպես էլ հանդիսատեսի կարգավիճակով): Ներառական ծրագրերի իրականացման ընթացքում սերտորեն համագործակցել առողջապահության ոլորտի համապատասխան մասնագիտական կառույցների հետ,

2.4.8. մարտ-ապրիլ ամիսներին իրականացնել կինոցուցադրություններ և միջոցառումներ Ֆրանկոֆոնիայի երկամսյակի շրջանակներում,

2.4.9. սեփական նախաձեռնությամբ և սեփական միջոցների հաշվին իրականացնել կինոցուցադրություններ և միջոցառումներ նվիրված՝ Արտաշես Հայ-Արտյանի 125, Դավիթ Մալյանի 120, Շառլ Ազնավուրի 100, Բագրատ Հովհաննիսյանի 95, Արման Մանարյանի 95 ամյակներին, և Հ.Մալյանի դերասանի թատրոն-ստուդիայի մասնակցությամբ՝ Հովհաննես Թումանյանի 155 ամյակին,

2.4.10.սեփական միջոցների հաշվին ապահովել Հ.Մալյանի դերասանի թատրոն-ստուդիայի մասնակցությունը Գյումրիի միջազգային թատերական փառատոնին,

2.4.11.ապահովել Հ.Մալյանի դերասանի թատրոն-ստուդիայի համագործակցությունը հրավիրյալ ռեժիսորների, արտիստների և այլ ստեղծագործողների հետ,

2.4.12. պետական մարմնի առաջարկությամբ ապահովել Հ.Մալյանի դերասանի թատրոն-ստուդիայի մասնակցությունը պետական մարմնի կողմից իրականացվող կամ հովանավորվող մշակութային միջոցառումներին (փառատոներ, մրցույթներ, հանդիսավոր երեկոներ, հոբելյանական միջոցառումներ),

2.4.13. մինչև յուրաքանչյուր ամսվա 25-ը պետական մարմնին ներկայացնել Հ.Մալյանի դերասանի թատրոն-ստուդիայի առաջիկա հաջորդ ամսվա ճշտված խաղացանկը,

2.4.14. ապահովել Հ.Մալյանի դերասանի թատրոն-ստուդիայի ներկայացումների իրականացումը,

2.4.15. իրականացնել կինոժառանգության ֆիլմերի պահպանում, թվայնացում և տարածում (այդ թվում՝ հեռուստաթերով և համացանցով),

2.4.16. մինչև կինոժառանգության հրապարակային ցուցադրումը և միջոցառումների իրականացումը պետական մարմնի հետ համաձայնեցնել գովազդային նյութերը (ազդագիր, հեռուստառադիոգովազդ և այլն),

2.4.17. մինչև 2024 թվականի հուլիսի 1-ը ներկայացնել ՊՈԱԿ-ի 2025թ. գործունեության զարգացման ծրագիրը,

2.4.18. յուրաքանչյուր եռամսյակ պետական մարմնին ներկայացնել ցուցանիշներ՝ համաձայն Հավելված N 3-ի,

2.4.19. կինոնախագծերի մրցույթի արդյունքում՝ արտադրական բյուջեի համալրման համար կինոարտադրողների հետ կնքված համաձայնագրերի կրկնօրինակները պետական մարմնին ներկայացնել կնքման ավարտից հետո՝ 10 աշխատանքային օրվա ընթացքում:

2.4.20. պետական մարմնի հետ ֆիլմերի արտադրության դրամաշնորհի տրամադրման պայմանագրերի կնքման ավարտից հետո՝ 10 աշխատանքային օրվա ընթացքում պետական մարմնին ներկայացնել ֆիլմարտադրող ընկերությունների հետ կնքված պայմանագրերի ու համաձայնագրերի կրկնօրինակները,

2.4.21. Իրականացնել միջազգային կինոկազմակերպությունների հետ համատեղ կինոծրագրեր՝ կինոոլորտի զարգացման և կինոարտադրողների միջազգային համագործակցության խթանման նպատակով, ներկայացնել օտարերկրյա պետություններում կինոհարթակներին մասնակցության առաջարկություններ (ներառյալ՝ մասնակցության ծրագիր, հանդիպումների ժամանակացույց, ցուցադրությունների ծրագիր և բովանդակային նկարագիր, հրավերներ և այլ տեղեկատվական նյութեր),

2.4.22. միջոցառումների իրականացման մասին իրազեկման բոլոր հարթակների տեսանելի վայրում (ներառյալ ազդագրերը, հրավիրատոմսերը, մամուլի հրապարակումները և այլն), ինչպես նաև միջոցառումների իրականացման մասին իրազեկմանն ուղղված ցանկացած գրավոր և/կամ բանավոր խոսքում հրապարակել պետական մարմնի անունը (որպես ֆինանսավորող կողմ), իսկ համաֆինանսավորման դեպքում՝ պետական մարմնին տրամադրել ամբողջական տեղեկատվություն՝ միջոցառումների աջակցող կազմակերպության(ների), ֆինանսավորման չափի և վերջինիս(ներիս) հետ ձեռք բերված այլ պայմանավորվածությունների մասին,

2.4.23. սույն պայմանագրով սահմանված պարտավորություններն իրականացնել պետական մարմնի կողմից հաստատված մեթոդական ցուցումների, հրահանգների և այլ իրավական ակտերի (փաստաթղթերի) պահանջներին համապատասխան,

2.4.24. ապահովել կազմակերպության հրապարակային հարթակների (պաշտոնական կայքէջ, Facebook, Instagram և այլն) գործարկումը կանոնադրական նպատակներին և խնդիրներին համապատասխան, և պետական մարմնին պարբերաբար տրամադրել կազմակերպության կողմից իրականացված միջոցառումների վերաբերյալ տեղեկատվական նյութերը,

2.4.25. իրականացնել անհրաժեշտ գովազդատեղեկատվական միջոցառումներ մշակութային արդյունքը հանրության լայն շրջանակներին հասանելի դարձնելու նպատակով: Եռամսյակային հաշվետվությամբ պետական մարմնին ներկայացնել հրապարակային հարթակների (պաշտոնական կայքէջ, Facebook, Instagram, Youtube և այլն) հետևորդների քանակը, ինչպես նաև յուրաքանչյուր միջոցառման գովազդային նյութերի շահառուների ցուցանիշները (*like, share),*

2.4.26. պետական մարմնին անհապաղ հայտնել սույն պայմանագրի կատարման համար առաջացած խոչընդոտների մասին և միաժամանակ ձեռնարկել իր կողմից հնարավոր բոլոր միջոցները՝ այդ խոչընդոտներն անհապաղ վերացնելու համար,

2.4.27. սույն պայմանագրի գործողության ընթացքում ապահովել միջոցառման իրականացմանը վերաբերող փաստաթղթերին ծանոթանալու պետական մարմնի հնարավորությունը՝ վերջինիս կողմից գրավոր պահանջ ստանալու օրվանից 10 աշխատանքային օրվա ընթացքում,

2.4.28. իրականացնել միջոցառման շրջանակներում պետական մարմնի կողմից տրամադրված գումարների հաշվապահական հաշվառման վարում՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով,

2.4.29. պետական մարմնի պահանջով նրան հաղորդել տեղեկատվություն աշխատանքների կատարման ընթացքի մասին, ինչպես նաև ներկայացնել սույն պայմանագրի կատարմանը վերաբերող ֆինանսական և բովանդակային հաշվետվությունները: Ներկայացնել տեղեկատվություն ֆիլմերի արտադրության յուրաքանչյուր փուլի և ավարտի վերաբերյալ՝ համապատասխան փաստաթղթերով և եզրակացությամբ: Կազմակերպությունը պատասխանատվություն է կրում հաշվետվությամբ ներկայացված տվյալների հավաստիության համար: Բովանդակային հաշվետվության հետ ներկայացնել իրականացված միջոցառումների մասին համապատասխան նյութեր (լուսանկարներ, լոգոտիպ կամ այլ գրաֆիկական պատկեր, հոլովակներ, ազդագրեր, հրավիրատոմսեր, մամուլի հրապարակումներ և այլ տեղեկատվական նյութեր՝ էլեկտրոնային կրիչներով (USB Flash drive), ինչպես նաև արտադրված ֆիլմերի, կինոտարեգրության և կինոժառանգության /կինո-ֆոտո-ֆոնո/ տարեկան հաշվետվությունը՝ կոշտ կրիչով (external Hard drive HDD/SSD),

2.4.30. պետական մարմնի և այլ ընկերությունների միջև կնքված պայմանագրերի շրջանակներում արտադրված կինոնկարների (խաղարկային, վավերագրական, անիմացիոն՝ լիամետրաժ, կարճամետրաժ) և կինոնախագծերի վերաբերյալ պետական մարմնին տրամադրել եզրակացություն՝ վերջինիս կողմից գրավոր պահանջ ստանալու օրվանից 5 աշխատանքային օրվա ընթացքում,

2.4.31. պետական մարմնին ներկայացնել եռամսյակային ու տարեկան հաշվետվություններ՝ համաձայն ՀՀ ֆինանսների նախարարի 2013 թվականի փետրվարի 4-ի N 104-Ն և 2019 թվականի մարտի 13-ի N 254-Ն հրամանների, ինչպես նաև ՀՀ օրենսդրությամբ և իրավական այլ ակտերով նախատեսված ձևով ու կարգով,

2.4.32. պետական մարմնի կողմից առանձին միջոցառումների իրականացման մասին հաշվետվությունները չընդունվելու դեպքում անվճար՝ պետական մարմնի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել արձանագրված անհամապատասխանությունները,

2.4.33. միջոցառման իրականացման համար անհրաժեշտ ապրանքները, աշխատանքները և ծառայությունները ձեռք բերել **Աշխատանքային օրենսգրքով**, ինչպես նաև **«Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով** սահմանված կարգով,

2.4.34. ավարտված միջոցառման փաստացի կատարված ծախսերի հաշվետվությունը ներկայացնել պետական մարմին, նկատի ունենալով, որ փաստացի ծախսերը

հիմնավորող հաշվապահական և այլ փաստաթղթերը գտնվում են Կազմակերպությունում և վերջինս պատասխանատվություն է կրում դրանց իսկության համար,

2.4.35. սույն պայմանագիրն ուժի մեջ մտնելուց հետո պետական մարմնի հաստատմանը ներկայացնել կազմակերպության ֆինանսատնտեսական գործունեության նախահաշիվը՝ համապատասխան հիմնավորումներով: Նախահաշվի յուրաքանչյուր ծախսային ուղղության մեջ կատարվող փոփոխությունը նախապես, մինչև փաստացի ծախսերի կատարումը, համաձայնեցնել պետական մարմնի հետ: Նախահաշվում փոփոխությունների ներկայացման առաջարկի վերջնաժամկետն է 2024 թվականի դեկտեմբերի 15-ը:

2.4.36. չծախսված գումարի վերջնական, տարեվերջյան մնացորդը (տնտեսումները, խնայողությունները) վերադարձնել Հայաստանի Հանրապետության պետական բյուջե ոչ ուշ, քան 2024 թվականի դեկտեմբերի 20-ը:

3. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ ԵՎ ՎՃԱՐՈՒՄՆԵՐԻ ԿԱՐԳԸ

3.1. Սույն պայմանագրի 1.1-ին կետում նշված միջոցառումների իրականացման համար պետական մարմինը կազմակերպությանն է վճարում 177740,4 (մեկ հարյուր յոթանասունյոթ միլիոն յոթ հարյուր քառասուն հազար չորս հարյուր) հազար դրամ՝ (ներառյալ հարկերը, տուրքերը և պարտադիր այլ վճարները)՝ համաձայն Հավելված N 1-ի: Այդ գումարի չափը կարող է փոփոխվել սույն պայմանագրով, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված հիմքերով ու կարգով,

3.2. Սույն պայմանագրի 3.1-ին կետում նշված գումարը պետական մարմինը կազմակերպությանն է վճարում սույն պայմանագրի Հավելված N 2-ով սահմանված ժամկետներում, կազմակերպության՝ սույն պայմանագրում նշված գանձապետական հաշվեհամարին փոխանցումներ կատարելու եղանակով,

3.3. Կազմակերպության կողմից միջոցառումների կատարման՝ սույն պայմանագրով սահմանված ցուցանիշներն ու պայմանները խախտելու դեպքում պետական մարմինն իրավունք ունի վերանայել սույն պայմանագրի 3.1-ին կետում նշված գումարի չափը և դրա վճարման ժամանակացույցը,

3.4. Համաձայն «ՀՀ 2024 թվականի պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքի 7-րդ հոդվածի 23-րդ մասի՝ հաշվարկված ԱԱՀ-ի գծով լրացուցիչ հատկացումները չեն կարող ուղղվել այլ նպատակների և չօգտագործված գումարները 2024 թվականի ընթացքում ենթակա են վերադարձման ՀՀ պետական բյուջե:

4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԺԱՄԿԵՏԸ

4.1. Սույն պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից, տարածվում է 2024 թվականի հունվարի 1-ից ծագած իրավահարաբերությունների վրա և գործում է մինչև կողմերի ստանձնած պարտավորությունների ամբողջ ծավալով կատարումը:

5. ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

5.1. Սույն պայմանագրի 1-ին կետում նշված և կատարված միջոցառումների մասով կազմակերպությունը, ոչ ուշ, քան յուրաքանչյուր եռամսյակին հաջորդող ամսվա 10-ը, պետական մարմնին է ներկայացնում ոչ ֆինանսական ցուցանիշների կատարման վերաբերյալ հաշվետվություն՝ համաձայն Հավելված N 4-ի:

6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

6.1. Սույն պայմանագրով նախատեսված պարտավորությունները կողմերը պարտավոր են կատարել պատշաճ և սահմանված ժամկետներում: Դրանք ոչ պատշաճ կամ ժամկետանց կատարելու, չկատարելու կամ կատարելուց խուսափելու դեպքում, ինչպես նաև իրենց գործողություններով կամ անգործությամբ սույն պայմանագրի կատարման համար խոչընդոտներ ստեղծելու, մյուս կողմին վնաս պատճառելու կամ կանխատեսվող եկամուտներից զրկելու համար կողմերից յուրաքանչյուրը կրում է պատասխանատվություն մյուս կողմին պատճառած վնասների և բաց թողնված օգուտների լրիվ ծավալով՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.2. Սույն պայմանագիրը կարող է վաղաժամկետ լուծվել կողմերից որևէ մեկի նախաձեռնությամբ՝ մյուս կողմի՝ սույն պայմանագրի պայմանները խախտելու դեպքում: Այդ ժամանակ նախաձեռնող կողմը պետք է ստանա վնասների և բաց թողնված (չստացված) եկամուտների լրիվ չափով փոխհատուցում:

6.3. Սույն պայմանագիրը վաղաժամկետ դադարեցնելը կամ լուծելը կողմերից որևէ մեկի համար այն կատարել շարունակելը աննպատակահարմար լինելու դեպքում կամ այլ պատճառաբանությամբ չի թույլատրվում: Նման դեպքում մյուս կողմն իրավունք ունի կամ ստանալ սույն պայմանագրի 6.1-ին կետով նախատեսված լրիվ փոխհատուցումը, կամ պահանջել սույն պայմանագրի հարկադիր կատարումը:

6.4. Սույն պայմանագրով նախատեսված պարտավորությունների ոչ պատշաճ կատարման դեպքում, ինչպես նաև սահմանված ժամկետները կազմակերպության կողմից չպահպանելու դեպքում վերջինս պետական մարմնին վճարում է տուգանք՝ ոչ պատշաճ կատարված պարտավորության համար նախատեսված գումարի 0.5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով, իսկ սահմանված ժամկետները խախտելու դեպքում՝ ժամկետների խախտմամբ իրականացված պարտավորության համար նախատեսված գումարի 0.5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով՝ ուշացված յուրաքանչյուր աշխատանքային օրվա համար:

6.5. Սույն պայմանագրով նախատեսված հաշվետվությունների ներկայացման համար սահմանված ժամկետները չպահպանելու դեպքում կազմակերպությունը պետական մարմնին վճարում է տույժ՝ պայմանագրի գնի 0.05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով՝ ուշացված յուրաքանչյուր աշխատանքային օրվա համար: Ընդ որում, սույն կետով սահմանված տույժերը վերաբերում են պետական մարմնին ներկայացվող ինչպես ֆինանսական, այնպես էլ՝ բովանդակային հաշվետվություններից յուրաքանչյուրին:

6.6. Սույն պայմանագրի 6.2-րդ և 6.3-րդ կետերով նախատեսված տուգանքը և տույժը կարող է հաշվարկվել և հաշվանցվել ծրագրի իրականացման արդյունքում

կազմակերպությանը վճարման ենթակա գումարների հետ: Տույժը հաշվարկվում է աշխատանքային օրերով:

6.7. Սույն պայմանագրով կազմակերպության կողմից ստանձնված պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով սույն պայմանագիրը միակողմանի լուծելու մասին ծանուցումը պետական մարմինը հրապարակում է իր պաշտոնական կայքում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կազմակերպությունը համարվում է սույն պայմանագիրը միակողմանի լուծելու մասին պատշաճ ծանուցված՝ ծանուցումը կայքում հրապարակվելուն հաջորդող օրվանից: Սույն պայմանագիրը միակողմանի լուծելու մասին ծանուցումը կայքում հրապարակվելու օրը ուղարկվում է նաև կազմակերպության էլեկտրոնային փոստին:

6.8. Սույն պայմանագրի կնքումից հետո 3-օրյա ժամկետում կազմակերպության անվանումը, գտնվելու վայրը, կազմակերպության կողմից դրամաշնորհ ստանալու համար ներկայացված ծրագիրը հրապարակվում են պետական մարմնի պաշտոնական ինտերնետային կայքէջում:

6.9. Կազմակերպությունը սույն պայմանագրով նախատեսված ժամկետներում պետական մարմնին ներկայացնում է միջոցառման կատարման վերաբերյալ հաշվետվություն, որը պետական մարմնի կողմից ընդունվելուց հետո 3-օրյա ժամկետում հրապարակվում է պետական մարմնի պաշտոնական ինտերնետային կայքէջում՝ բացառությամբ անձի եկամուտներին վերաբերող դրամաշնորհային պայմանագրերի:

7. ՄՈՆԻԹՈՐԻՆԳԸ

7.1.պետական մարմինը միջոցառման իրականացման արդյունքների համապատասխանության գնահատման նպատակով իրականացնում է մոնիթորինգ:

7.2. Մոնիթորինգն իրականացվում է պետական մարմնի և (կամ) նրա կողմից լիազորված անձի կողմից:

7.3. Մոնիթորինգի իրականացման ընթացքում բացահայտված թերացումների ու բացթողումների շտկման նպատակով կազմակերպությանը տրվում են ցուցումներ, և կատարվում են առաջարկություններ:

7.4. պետական մարմինը ցանկացած ժամանակ կարող է միջոցառման շրջանակներում իրականացնել մոնիթորինգ՝ ուսումնասիրելով միջոցառմանն առնչվող ցանկացած փաստաթղթեր և նյութեր:

7.5. Մոնիթորինգի իրականացման ընթացքում կազմակերպությունից կարող են պահանջվել գրավոր ու բանավոր պարզաբանումներ և բացատրություններ:

8. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

8.1. Սույն պայմանագրով նախատեսված պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներն են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրության հայտարարումը, քաղաքական

հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարումը: Եթե անհաղթահարելի ուժի ազդեցությունը շարունակվում է 3 ամսվանից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծելու պայմանագիրը՝ դրա մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

9. ԵԶՐԱՓԱԿԻՉ ԴՐՈՒՅԹՆԵՐ

9.1. Սույն պայմանագրում կատարվող փոփոխությունները կամ լրացումներն իրավաբանական ուժ ունեն, եթե կազմված են գրավոր և ստորագրված են կողմերի կողմից,

9.2. Սույն պայմանագիրը կնքվում է սույն պայմանագրի կողմերի թվին համապատասխան թվով օրինակով, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ,

9.3. Սույն պայմանագրով նախատեսված պարտավորությունների չկատարման հետ կապված, ինչպես նաև սույն պայմանագրով չնախատեսված հարաբերությունները կարգավորվում են Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ:

10. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԵՏԱԿԱՆ ՄԱՐՄԻՆ՝	ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ՝
ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն	«Հայաստանի ազգային կինոկենտրոն» ՊՈԱԿ
Հասցե՝ ք. Երևան, Վ. Սարգսյան 3, Կառավարական 2-րդ շենք	Երևան, Տերյան 3ա
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն	ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
h/h 900011039527	ՀՀ 900018001744, ՀՎՀՀ 01203271,
ՀՎՀՀ՝ 02698732	Հեռ.՝ 010522032
Գլխավոր քարտուղար՝	Տնօրենի պաշտոնակատար՝
_____ Հ.Հակոբյան	_____ Շ. Միրզախանյան
Կ.Տ.	Կ. Տ.

Հավելված N 1
«01» «02» 2024 թ.
N ՄՇԴ- 66 - 2024 պայմանագրի

Ազգային կինոծրագրերի իրականացման կանխատեսվող ֆինանսական և ոչ ֆինանսական ցուցանիշները

Հ/Հ	Ցուցանիշներ	Միավոր	Քանակ
1.	Խաղարկային, վավերագրական և անիմացիոն կինոնկարների արտադրության ապահովում (ֆիլմերի քանակը), որից՝		24
1.1	Խաղարկային կինոնկարներ	հատ	9
1.2	Վավերագրական կինոնկարներ	հատ	7
1.3	Անիմացիոն կինոնկարներ	հատ	8
2.	Վերականգնվելիք (պատճենահանվելիք) և թվայնացվող ֆիլմեր	հատ	13
3.	Կինոարտադրության ոլորտում ստեղծագործողների և արտադրողների ընդհանուր թվից իգական սեռի մասնաբաժինը	տոկոս	50
4.	Միջոցառումների կազմակերպում (հոբելյանական, ֆրանկոֆոնիային նվիրված, քրեակատարողական հիմնարկներում, ՀՀ մարզերում, խոցելի խմբերի համար), քանակ	հատ	12
5.	Կինոժառանգության ֆիլմերի տարածում հեռուստաեթերով, քանակ	հատ	500
6.	Կինոտարեգրության արտադրություն՝ իրադարձությունների վավերագրում, քանակ	հատ	1
7.	Հ.Մալյանի դերասանի թատրոն-ստուդիայի		
7.1	Հանդիսատեսի թվաքանակ	մարդ	3500
7.2	Ներկայացումների քանակ	հատ	50
7.3	Ստացիոնար մեկ ներկայացման համար դահլիճի միջին բեռնվածություն	տոկոս	55
7.4	Մեկ ներկայացման հաճախելիության նորմատիվ	մարդ	68
7.5	Տոմսի միջին գին	դրամ	2216,3
8.	Եկամուտներ, այդ թվում՝	հազար դրամ	217697,4
8.1	Կինոֆիլմերի ցուցադրությունից (ՀՀ տարածքում և օտարերկրյա պետություններում)	հազար դրամ	32200,0
8.2	Հ.Մալյանի դերասանի թատրոն-ստուդիայի տոմսերի վաճառքից	հազար դրամ	7757,0

8.3	Տրամադրվող դրամաշնորհի գումարը	հազար դրամ	177740,4
9.	Ծախսեր		217697,4

ՊԵՏԱԿԱՆ ՄԱՐՄԻՆ՝

ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և
սպորտի նախարարություն
Հասցե՝ ք. Երևան, Վ. Սարգսյան 3,
Կառավարական 2-րդ շենք
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
հ/հ 900011039527
ՀՎՀՀ՝ 02698732

Գլխավոր քարտուղար՝
_____ Հ.Հակոբյան
Կ.Տ.

ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ՝

«Հայաստանի ազգային կինոկենտրոն»
ՊՈԱԿ
Երևան, Տերյան 3ա
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
ՀՀ 900018001744, ՀՎՀՀ 01203271,
Հեռ.՝ 010522032

Տնօրենի պաշտոնակատար՝
_____ Շ. Միրզախանյան
Կ. Տ.

Հավելված N 2
«01» «02» 2024 թ.
N ՄՇԴ-66-2024 պայմանագրի

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

Կազմակերպության անվանումը՝ **«Հայաստանի ազգային կինոկենտրոն» ՊՈԱԿ**

1056	11003	**Ազգային կինոծրագրերի իրականացում**												
Ձեռք բերվող ապրանքի, աշխատանքի, ծառայության անվանումը	Բյուջետային ծախսերի տնտ. Դասակարգման հոդվածը	Նախատեսվում է ֆինանսավորել Հայաստանի Հանրապետության 2024 թվականի պետական բյուջեից, այդ թվում ըստ ամիսների /աճողական/												ԸՆԴԱՄԵՆԸ
		I եռամսյակ			I կիսամյակ			9 ամիս			տարի			
		հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	
1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13	14	15
Ընթացիկ դրամաշնորներ պետական և համայնքային ոչ առևտրային կազմակերպու-թյուններինն	4637	0,0	17774,0	35548,1	50359,8	65171,5	79983,2	94794,9	109606,6	124418,3	142192,3	159966,4	177740,4	177740,4
Ընդամենը		**0,0**	**17774,0**	**35548,1**	**50359,8**	**65171,5**	**79983,2**	**94794,9**	**109606,6**	**124418,3**	**142192,3**	**159966,4**	**177740,4**	**177740,4**

ՊԵՏԱԿԱՆ ՄԱՐՄԻՆ՝
ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն
Հասցե՝ ք. Երևան, Վ. Սարգսյան 3, Կառավարական 2-րդ շենք
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
հ/հ 900011039527
ՀՎՀՀ՝ 02698732
Գլխավոր քարտուղար՝
_____ Հ. Հակոբյան
Կ.Տ.

ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ՝
«Հայաստանի ազգային կինոկենտրոն» ՊՈԱԿ
Երևան, Տերյան 3ա
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
ՀՀ 900018001744, ՀՎՀՀ 01203271, Հեռ.՝ 010522032
Տնօրենի պաշտոնակատար՝
_____ Շ. Միրզախանյան
Կ. Տ.

Հավելված N 3

«01» «03» 2024 թ.

N ՄՇԴ- 66 -2024 պայմանագրի

Կինոարվեստի ոլորտում ՊՈԱԿ-ների հիմնական կատարողական ցուցանիշներ (ՀԿՑ)

Հ/Հ	Ցուցանիշներ	Միավոր	Քանակ
1.	Կազմակերպության հետ համագործակցող միջազգային կազմակերպություններ	անվանում երկրներ	
2.	Կազմակերպության հետ համագործակցող կինոարտադրող ընկերություններ	հատ	
3.	Միջազգային փառատոներին կամ մասնագիտական հարթակներին մասնակցություն	անվանում երկրներ	
4.	Միջազգային փառատոներին կամ մասնագիտական հարթակներին հայկական կինոնախագծերի, ֆիլմերի և կինոգործիչների մասնակցություն	անվանում երկրներ	
4.1	Կինոնախագծեր և Ֆիլմեր	հատ անվանում	
4.2	Կինոգործիչներ	մարդ Ա.Ա	
5.	Դեբյուտային կինոնախագծեր՝ խաղարկային, վավերագրական, անիմացիոն /լիամետրաժ, կարճամետրաժ/	հատ անվանում	
6.	Կինոարտադրողների հետ մեթոդական և խորհրդատվական հանդիպումներ	մարդ	
7.	ՊՈԱԿ-ի գործունեության հանրայնացման ընթացքում լրատվամիջոցների ներգրավվածություն (այդ թվում՝ օտարերկրյա ԶԼՄ-ներ)	հատ	
8.	Հովանավորների ներգրավվածություն (հովանավորի հանրային վարկանիշի բարձրացմանն ուղղված միջոցառումներ)	հատ	
9.	Հայկական կինոարտադրանքի (այդ թվում՝ կինոժառանգության, ժամանակակից ֆիլմերի) դիտումների քանակ	հատ	
10.	Ծառայության մատուցման եղանակով իրականացված այլ միջոցառումներ	հատ	
11.	Կազմակերպության բովանդակային գործունեության մեջ հրավիրյալ ստեղծագործողներ և մասնագետներ (հայ և օտարազգի)	մարդ	
12.	Ինքնազբաղ/անկախ ստեղծագործողների ներգրավվածությունը միջոցառումներում	տոկոս	

13.	Հ.Մալյանի դերասանի թատրոն-ստուդիայի համագործակցությունը հրավիրյալ ռեժիսորների, արտիստների և այլ ստեղծագործողների հետ	մարդ	
14.	պետական մարմնի կողմից իրականացվող կամ հովանավորվող մշակութային միջոցառումներին (փառատոներ, մրցույթներ, հանդիսավոր երեկոներ, հոբելյանական միջոցառումներ) Հ. Մալյանի դերասանի թատրոն-ստուդիայի մասնակցություն	հատ	

ՊԵՏԱԿԱՆ ՄԱՐՄԻՆ՝

ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն
Հասցե՝ ք. Երևան, Վ. Սարգսյան 3, Կառավարական 2-րդ շենք
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
հ/հ 900011039527
ՀՎՀՀ՝ 02698732

Գլխավոր քարտուղար՝
_____ Հ. Հակոբյան

Կ.Տ.

ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ՝

«Հայաստանի ազգային կինոկենտրոն» ՊՈԱԿ
Երևան, Տերյան 3ա
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
ՀՀ 900018001744, ՀՎՀՀ 01203271,
Հեռ.՝ 010522032

Տնօրենի պաշտոնակատար՝
_____ Շ. Միրզախանյան

Կ. Տ.

Հավելված N 4
«01» «02» 2024 թ.
N ՄՇԴ-66 -2024 պայմանագրի

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
ՈՉ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Ծրագրի կամ քաղաքա-կանության միջոցառման անվանումը	Չափորոշիչը (նկարա-գրությունը)	Չափորոշչի տեսակը	Ոչ ֆինանսական ցուցանիշներ					
			Ցուցանիշի հաստատված կանխա-տեսումը հաշվետու ժամանա-կահատվածի համար	Ցուցանիշի փոփո-խություններն ըստ համապա-տասխան իրավական ակտի (+/-)	Ճշտված ցուցանիշը հաշվետու ժամանակա-հատվածի համար (սյուն 1+սյուն 2)	Փաստացի ցուցանիշը (կատարված և ընդունված) հաշվետու ժամանակա-հատվածում	Հաստատված և փաստացի ցուցանիշների տարբերու-թյունը (սյուն 4-սյ. 3)	Տարբերության պատճառը (սյուն 2-ում նշված իրավական ակտերի հղումները և սյուն 5-ում նշված տարբե-րության պարզա-բանումները)
Ա	Բ	Գ	1	2	3	4	5	6

ՊԵՏԱԿԱՆ ՄԱՐՄԻՆ՝

ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն
Հասցե՝ ք. Երևան, Վ. Սարգսյան 3, Կառավարական 2-րդ շենք
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
հ/հ 900011039527
ՀՎՀՀ՝ 02698732

Գլխավոր քարտուղար՝

_____ Հ. Հակոբյան
Կ.Տ.

ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ՝

«Հայաստանի ազգային կինոկենտրոն» ՊՈԱԿ
Երևան, Տերյան 3ա
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
ՀՀ 900018001744, ՀՎՀՀ 01203271, Հեռ.՝ 010522032

Տնօրենի պաշտոնակատար՝

---------- Շ. Միրզախանյան
Կ. Տ.